ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ՀԱՆԴԵՍԸ

Տեղեկատվական միջոցների բուռն զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծել առավել տարողունակ գիտական հետազոտություններ իրականացնելու համար: Միաժամանակ լայն թափ ստացող տեղեկատվական պատերազմի պայմաններում կատարվում են նաև պատմական իրադարձությունների գնահատումների բազմապիսի շահարկումներ ու խեղաթյուրումներ, ինչը սպառնալիք է գիտության և հասարակական մտքի հետագա զարգացման համար, ուստի և անաչառ հետազոտությունների արդյունքում ձեռք բերվող գիտական նորույթների մասնագիտական շրջանակներին, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակներին հասանելիությունը դարձել է հրատապ և կարևոր խնդիր:

Մասնագիտական բազմալեզու հանդեսը խնդիր ունի նպաստելու հայագիտական կենտրոնների միջև միջազգային համագործակցության սերտացմանը, խթանելու Հայաստանի պատմության ու մշակույթի համակողմանի հետազոտությունների իրականացմանը, նոր հարցադրումներով համալրելու պատմական իրադարձությունների քննական վերլուծությունները, դիմագրավելու Հայաստանի պատմության խեղաթյուրումներին ու շահարկումներին, քննարկելու հայագիտության հետագա զարգացմանը խոչընդոտող գործոնների ու հանգամանքների հաղթահարման ուղիները, նորովի լուսաբանելու Հայաստանի պատմության հիմնահարցերը, օժանդակելու ձերբազատվել կաղապարներից և գիտական շրջանակներին ու հանրությանը ներկայացնել ճշմարտությունը:

Հատուկ կարևորություն է տրվելու Հայաստանի և տարբեր երկրների հայկական գաղթօջախների պատմությունը լուսաբանող հետազոտությունների հրապարակմանը, հարակից երկրների ժողովուրդների լեզուներով Հայաստանի պատմության վերաբերյալ պահպանված սկզբնաղբյուրների աղբյուրագիտական ուսումնասիրությունների իրականացմանը, Հայաստանում ուրույն քաղաքակրթության զարգացման գործընթացի անընդհատության ցուցադրմանը:

Հանդեսում կհրապարակվեն հայ և օտարազգի հայագետների աշխատություններ, կներկայացվեն դասական հայագիտության երախտավորների գիտական ժառանգությունն ու հայագիտական նորագույն նվաճումները, հայագիտական տարբեր կենտրոնների ձեռքբերումներն ու խնդիրները:

Գիտական հանդեսը լայնորեն բաց է բոլոր երկրների գիտնականների հայագիտական ուսումնասիրությունների համար և հրապարակելու է

հայագիտության բոլոր ճյուղերը ներկայացնող հետազոտություններ: Կարևորվելու է ստացված հայագիտական աշխատությունների այլ լեզուների թարգմանությունների իրականացումը: Հանդեսը ունենալու է նաև լրատու բաժին, մատենագիտական ցանկեր, ըստ անհրաժեշտության հոդվածները կուղեկցվեն լուսանկարներով:

Հանդեսին ուղարկվող հոդվածները կարող են լինել հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով: Հայերեն հոդվածները կուղեկցվեն ռուսերեն և անգլերեն ընդարձակ ամփոփումներով, իսկ այլ լեզուներով ստացվող հոդվածները կունենան ամփոփումներ հայերեն և անգլերեն:

Հանդեսը լույս կընծայվի տարեկան երեք համար պարբերականությամբ, Times New Roman, GHEA Hayk School և Sylfaen շարվածքներով:

AN INTERNATIONAL REVIEW OF ARMENIAN STUDIES

The unprecedented development of Information Technology has opened new capabilities to implement high-capacity scientific research.

Meanwhile, the rapidly deploying information wars are conducted using various manipulations and distortions of the accounts of historical events, which is a threat to further development of scientific thinking and public relations, therefore, access to the obtained scientific achievement resulting from impartial research as extended to the professional circles, as well as to the wide-ranging community of readers has become an urgent and important objective.

The establishment of a multi-lingual journal is called upon to facilitate the enhancement of International cooperation among the centers of Armenian Studies, to stimulate the multi-faceted research of Armenian History and Culture, to add new focal points to the critical analysis of historical events, to counter the distortions and manipulations of the Armenian history, to discuss the methods of refuting the factors impeding further development of Armenian Studies, so as to shed a new light on the principal issues of Armenia's history, helping to get rid of the stagnant templates and to present the truth to the scholarly circles and the public at large.

Of primary importance is publication of research results on the history of Armenian settlements in Armenia and other countries, preserved studies of the original sources on the History of Armenia in languages of the adjacent countries, as well as presentation of the unique processes of political development in Armenia.

The Journal will publish the works by Armenian and foreign scholars of Armenian Studies, prominent pieces of writing on classical scholarship as well as contemporary achievements, acquisitions and problems relating to different centers of Armenian Studies.

The scholarly Journal is widely open for the scholars of all countries to

present their results of Armenian research for publishing research works pertaining to all branches of Armenian Studies. Preferences will be extended to performing translations of the submitted articles on Armenian Studies into languages other than Armenian. The Journal will run an information section and will publish bibliographic lists; articles will be accompanied with photographic evidence, if appropriate.

Articles submitted to the Journal can be writted in Armenian, English, Russian, French or German. Articles in Armenian shall be accompanied by extended summaries in English, while articles in other languages shall have summaries in Armenian and English.

The Journal will see the light three times a year, using the fonts of Times New Roman, GHEA Hayk School and Sylfaen.